ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 343 – Ա **13 նոյեմբերի 2017 թ.**

<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇՈՐԺԱ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N 87 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇՈՂԱԿԱԹ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, <<Վարչատարածքային բաժանման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հավելվածի 2.4-րդ բաժնի 74-րդ կետի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և 1.16-րդ կետի <<ա>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 801-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերը

որոշում եմ՝

1. <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Շորժա գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Շողակաթ գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2002 թվականի նոյեմբերի 18-ի <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Շորժա գյուղի միջնակարգ դպրոց>> պետական հիմնարկը վերակազմակերպելու և <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Շորժա գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին>> N 87 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում, 1-ին ,2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերում <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Շորժա գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության>> բառերը փոխարինել <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Շողակաթ գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության>> բառերով.

2) որոշման 2-րդ կետով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Հաստատել <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Շողակաթ գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրությունը:

4. <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Շողակաթ գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արամ Վլյաթի Մուրադյանին՝ ապահովել <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Շողակաթ գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության պետական գրանցումը՝ կազմակերպության միջոցների հաշվին:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ